ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/182

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.07.2021թ. թիվ 26/26/11101-2021 գրությամբ «ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիքի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 06.06.2021թ. թիվ 134 գրության հիման վրա 08.07.2021թ. թիվ 26/26/11101-2021 գրությամբ նախաձեռնել է «ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/182 ընթացակարգի շրջանակներում 16.07.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիքի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիքի համայնքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.06.2021թ. թիվ 134 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիքի համայնքում ս/թ հունիսի 28-ին կայացած ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/01 ծածկագրով գնանշման հարցման մրցույթին հայտ էին ներկայացրել երեք կազմակերպություն՝ «ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Ալ-Մասքա» ՍՊԸ և «Գագիկ-Մովսես» ՍՊԸ-ն:

Սակայն, ս/թ հունիսի 30-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ «ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն հայտնեց, որ հրաժարվում է գնման հետագա գործընթացից: Գնման հետագա գործընթացը շարունակելու համար գանահատող հանձնաժողովը որոշեց նախապատվությունը տալ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ալ-Մասքա» ՍՊԸ-ին»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/182 ընթացակարգի շրջանակներում 16.07.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/182 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/182 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիքի համայնքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտով ներկայացրել է հետևյալ թիվ 2 Հավելվածը՝ գնային առաջարկը.

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, <<ԷՆ.ԷՌ.ՋԻ Քոնսթրաքշն >>ՍՊԸ
-ն առաջարկում է
մասնակցի անվանումը
պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

/ՀՀ դրամ/

Չափա-բաժնի համարը	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Գեղարքունիք համայնքի ոռոգման ցանցի վերանորոգում և կառուցման աշխատանքներ	24331200 Քսանչորս միլիոն երեքհարյուրերեսունմեկհազար երկուհարյուր	6082800 Վեց միլիոն ութսունվերկուհազար ութ հարյուր	30414000 Երեսուն միլիոն չորսհարյուրտասնչորս հազար

Տնօրեն՝ Նարեկ Հովհաննիսյան
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է հրավերի պահանջների համապատասխան:

4. «ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է դիմում՝ հետևյալ բովանդակությամբ.

«Խնդրում եմ «ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/01» գնանշման հարցման հայտը, որով «ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող ճանաչել անվավեր»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2021թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնանշման հարցման հայտն ունի նվազագույն գնային առաջարկը՝ 30414000 /երեսուն միլիոն չորս հարյուր տասնչորս հազար/ ՀՀ դրամ, սակայն վերջինս հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից:

5. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիքի համայնքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, 06.06.2021թ. թիվ 134 գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազորված մարմնին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.07.2021թ. թիվ 26/26/11101-2021 գրությունը, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիքի համայնքապետարանի 06.06.2021թ. թիվ 134 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ հարկային օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով, բացառությամբ Օրենսգրքի 64-րդ և 65-րդ հոդվածներով սահմանված գործարքների ու գործառնությունների:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝

1) նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված: Հանձնաժողովի քարտուղարը հաղորդում է տեղեկատվություն գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին (նիստը նախագահողին) փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

3) հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 5-րդ կետի 5.1-րդ և 5.2-րդ կետերի համաձայն՝

5.1 Առաջարկվող գինը աշխատանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

5.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով.

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված.

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումարները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը.

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը.

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով :

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: **<u>Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:</u>**

Այսպես, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիքի համայնքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է հրավերի պահանջների համապատասխան:

«ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է դիմում՝ հետևյալ բովանդակությամբ.

«Խնդրում եմ «ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/01» գնանշման հարցման հայտը, որով «ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող ճանաչել անվավեր»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնանշման հարցման հայտն ունի նվազագույն գնային առաջարկը՝ 30414000 /երեսուն միլիոն չորս հարյուր տասնչորս հազար/ ՀՀ դրամ, սակայն վերջինս հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից:

Այսպիսով՝ վերոնշված իրավակարգավորումների և էական նշանակություն ունեցող փաստերի վերլուծության արդյունքում հանգում եմ եզրահանգման առ այն, որ Ընկերության նկատմամբ չի կարող կիրառվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը՝ հետևյալ հիմնավորմամբ.

«ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն Ընթացակարգին ներկայացրած հայտի գնային առաջարկով (թիվ 2 Հավելված) թվերով (նույնը տառերով) որպես Արժեք նշել է 24 331 200, ԱԱՀ՝ 6 082 800, իսկ Ընդհանուր գին՝ 30 414 000, այսինքն՝ գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն՝ ԱԱՀ-ի սյունակում նշված գումարի մասով, այն է՝ 6 082 800 գումարի փոխարեն անհրաժեշտ էր նշել 4 866 240 ԱԱՀ-ի գումար, քանի որ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով և 24 331 200 գումարի նկատմամբ կազմում է 4 866 240:

Վերոնշվածի արդյունքում ստացվում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն Ընկերության հայտը հայտերի բացման և գնահատման նիստում մերժելու փոխարեն որոշել է գնահատել բավարար, այսինքն՝ գնահատող հանձնաժողովը կայացրել է ոչ իրավաչափ որոշում:

Քանի որ առկա է նշված ոչ իրավաչափ որոշումը, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անհրաժեշտ չի համարում քննության առարկա դարձնել սույն ընթացակարգի նախաձեռնման համար Պատվիրատուի կողմից 06.06.2021թ. թիվ 134 գրությամբ ներկայացված մնացած փաստաթղթերը, որտեղ ևս առկա են անճշտություններ և անհամապատասխանություններ՝ փաստաթղթերի կազմման ամսաթվերի մասով:

Այսպիսով՝ ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ նման պայմաններում Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.07.2021թ. թիվ 26/26/11101-2021 գրությամբ «ԷՆ. ԷՌ. Ջի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**